ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք.Աշտարակ 2024թ. հուլիսի 10 -ին, N 263 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ՔՈՒՉԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԼԻԼԻԱ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ հոդվածներով, 164-րդ հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված 3-րդ հավելվածի 61-րդ կետը և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Քուչակի Մ. Նալբանդյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լիլիա Գևորգյանի 2024 թվականի հուլիսի 9-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Քուչակի Մ. Նալբանդյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լիլիա Գևորգյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդ 2023-2024 թվականների ուսումնական տարվա համար 25 աշխատանքային օր տևողությամբ՝ 2024 թվականի հուլիսի 11-ից օգոստոսի 14-ը ներառյալ:
2. Լիլիա Գևորգյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Քուչակի Մ. Նալբանդյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել «Քուչակի Մ. Նալբանդյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցչի օգնական Անահիտ Եսայանին:
3. Լիլիա Գևորգյանին աշխատանքի մեջ համարել 2024 թվականի օգոստոսի 15-ից:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 10.07.2024 17:03:51 GMT+04

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Մ. ՄՈՎՍԻՍՅԱՆ